Հեռախոս/Telephone: +374 060 61 61 00, էլ.փոստ/email: info@byblosbank.am

# ՕՆԼԱՅՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## 1-Ներածություն

1.1-Հաճախորդը ցանկանում է օգտվել Բանկի կողմից մատուցվող Օնլայն բանկային ծառայություններից, իսկ Բանկն այդ ծառայությունները հասանելի է դարձնում Հաճախորդին:
1.2-Սույնով Բանկը և Հաճախորդը համաձայնվում են, որ ծառայությունները Հաճախորդին մատուցվում են սույն Պայմաններում նշված պայմաններով, ինչպես նաև ծառայության օգտագործման ընթացքում հաստատված այլ պայմաններով:

## 2- Սահմանումներ

**Անվտանգության սարք/եր՝** Ծառայությունից օգտվելու համար տրված Գաղտնաբառ, Օգտագործողի Անուն, մեկանգամյա անվտանգության ծածկագիր գեներացնող Անվտանգության Digipass Սարք և/կամ Google Authenticator մոբայլ հավելված, և/կամ Բանկի կողմից սահմանված անվտանգության ընթացակարգ կամ տրամադրվող այլ անվտանգության գործիք:
**Բանկ՝** «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ և վերջինիս իրավահաջորդներ:
**Բանկային ծառայություններ՝** ֆինանսական, բանկային և այլ ծառայություններ, գործառնություններ, գործողություններ, որոնք կարող են առաջարկվել Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ, մասնավորապես՝
**Գործարքներ և գործողություններ՝**
- դրամական միջոցների փոխանցումներ Հաճախորդի՝ Բանկում ունեցած Հաշիվների միջև,
- դրամական միջոցների փոխանցումներ Բանկում այլ հաճախորդների Հաշիվներին,
- Հաճախորդի՝ Բանկում ունեցած Հաշիվներում առկա դրամական միջոցների արժույթի փոխանակման գործարքներ,
- դրամական միջոցների փոխանցումներ ՀՀ տարածքում գործող բանկերի այլ հաշվետերերի բանկային հաշիվներին,
- դրամական միջոցների փոխանցումներ ՀՀ տարածքից դուրս գործող բանկերի հաշվետերերին,
- կոմունալ վճարումների կատարում,
- նոր վճարային քարտերի պատվիրման և վճարային քարտերի վերաթողարկման և/կամ փոխարինման, ինչպես նաև վճարային քարտի դադարեցման դիմումների ներկայացում,
- ազատ ֆորմատով նամակների (պահանջներ, հարցումներ և այլն) ուղարկում Բանկ,
- հայտարարությունների, ծանուցումների, զգուշացումների և պատասխան նամակների ստացում Բանկից:

**Մոբայլ Հավելված՝** Բիբլոս Բանկ Արմենիա Մոբայլ Հավելվածի գործող տարբերակը (կամ հաջորդող որևէ այլ տարբերակ), որը հնարավոր է ներբեռնել այն մոբայլ սարքերին,

# ONLINE BANKING TERMS & CONDITIONS

## 1-Introduction

1.1-The Customer wishes to use Internet Banking Services provided by the Bank and the Bank is willing to make the Online Banking Services available to the Customer.
1.2-The Customer and the Bank agree that the Services shall be supplied to the Customer subject to the terms and conditions contained or referred to hereinafter and any other terms and conditions approved upon while using the services.

## 2-Definitions

**Security Devices** mean the Password, Username, Digipass Security Token and/or Google Authenticator Mobile Application for creation of one time security code, and/or any other Security procedure or tool assured by the Bank.

**Bank** means Byblos Bank Armenia CJSC and includes its successors and assigns.

**Banking Services** mean the financial, banking or other services, products, facilities, operations and activities which may be offered by the Bank through the Service from time to time, in particular:

**Services and Activities**
- Transfer of funds between the Accounts of the Customer held with the Bank,
- Transfer of funds to the accounts of other customers held with the Bank,
- Currency exchange transactions of the funds available on the Accounts of the Customer,
- Transfer of funds to the accounts of accountholders of other banks in Armenia,
- Transfer of funds to the accounts of accountholders of banks outside Armenia,
- Processing of utility payments,
- Requesting of new payment cards, re-issuance and replacements of payment cards, as well as termination of payment cards,
- Sending free format letters (requests, inquiries, etc) to the Bank,
- Receiving of announcements, notifications, warnings and other response letters from the Bank.

**Mobile Application** means the current version of Byblos Bank Armenia Mobile Application (or any subsequent version) which can be downlowded on the Customer's mobile device(s), which work with the operational systems acceptable by the Bank and by which the Bank services provided through internet are made accessible to the

որոնք աշխատում են Բանկի համար ընդունելի օպերացիոն համակարգերով, և որի միջոցով ինտերնետի միջոցով մատուցվող Բանկային ծառայությունները հասանելի են դարձվում Հաճախորդին,

**Տեղեկատվության ստացում՝**

- Հաշվի/Հաշիվների մնացորդների դիտում,
- Հաշվով/Հաշիվներով գործարքների վերաբերյալ տեղեկությունների և քաղվածքների պատվիրում և ստացում,
- ժամկետային ավանդի գումարի մնացորդի և կուտակված տոկոսների դիտում,
- վարկերի մնացորդների, հաշվեգրված տոկոսների և վարկերի մարման ժամանակացույցի դիտում,
- Հաշվով/Հաշիվներով կատարված գործարք(ներ)ի մանրամասների դիտում (օր.՝ շահառուի անուն, վճարման մանրամասներ),
- Բանկի կողմից սահմանած արտարժույթի նախկին և առկա փոխարժեքների դիտում:

Ծառայության միջոցով կատարվող գործարքների և ստացվող տեղեկատվության ցանկը կարող է ժամանակ առ ժամանակ վերանայվել Բանկի կողմից՝ Հաճախորդին ծանուցելով Բանկի ինտերնետային էջի, կամ Բանկի մասնաճյուղերի միջոցով՝ համապատասխան փոփոխությունը կատարելուց մեկ ամիս առաջ:

Բանկի կողմից Հաճախորդին առաջարկվող Ծառայության նկատմամբ կիրառվում են սույն Պայմանները, Բանկի և Հաճախորդի միջև կնքված Բանկային Հաշվի Բացման և Վարման Պայմանները, կոնկրետ գործարքի/գործառնության համար Բանկի կողմից այլ պայմաններ սահմանված լինելու դեպքում՝ նաև կիրառելի այլ պայմանները:

**Բանկի ինտերնետային կայք**՝ «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ պորտալը՝ www.byblosbankarmenia.am, պորտալ, որի միջոցով ինտերնետի միջոցով մատուցվող Բանկային ծառայությունները հասանելի են դառնում Հաճախորդներին:

**Գաղտնաբառ**՝ անհատական նույնականացման համար և/կամ Բանկի կողմից Հաճախորդին տրամադրվող ցանկացած այլ էլեկտրոնային նույնականացնող ստորագրություն, ներառյալ դրանց փոփոխությունները:

**Գործարք**՝ Ծառայության միջոցով ցանկացած Բանկային ծառայության օգտագործում, այդ թվում՝ Հաճախորդի կողմից չլիազորված օգտագործում կամ զեղծարար օգտագործում:

**Դիմումի ձև**՝ Ծառայությունից օգտվելու համար Բանկի կողմից հաստատված Հաճախորդի դիմում:

**Ծառայություն**՝ ինտերնետի միջոցով Բանկային Ծառայություններից օգտվելու հնարավորության ընձեռում, ներառյալ՝ Մոբայլ Հավելվածի օգտագործմամբ:

**Հաճախորդ**՝ Բանկի հաշվետեր, որը դիմել է Ծառայությունից օգտվելու համար և նրան տրվել է Օգտագործողի Անուն, Գաղտնաբառ և /կամ այլ անվտանգության գործիք, ներառյալ նրա իրավահաջորդները և ներկայացուցիչները:

**Հաճախորդի հանձնարարականներ**՝ Ծառայության միջոցով

Customer;

**Receipt of Information**

- Enquiry of balances of the Account(s),
- Requesting and receiving information and statements regarding the transactions on the Account(s),
- Enquiry of the balance of the term deposit and accrued interests,
- Enquiry of outstanding loan amounts, accrued interests and repayment schedules,
- Enquiry of the details of a transaction(s) conducted through the Account(s) (e.g. beneficiary name, payment details . etc),

-View prevailing and historical exchange rates set by the Bank.

The list of transactions and information available through the Service may be changed from time to time by the Bank with one month prior notice to the Customer via the web-page or through any branch of the Bank.

The Services offered to the Customer by the Bank shall be governed by these Terms and Conditions, the Terms and Conditions for Opening and Operating Bank Accounts signed between the Bank and the Customer, and in case the Bank has stipulated other terms and conditions for a particular service / operation – also by applicable other terms and conditions.

**Bank's Internet Site** means the Byblos Bank Armenia cjsc's portal being **www.byblosbankarmenia.am,** through which Customers access Internet Banking and the Services.

**Password** means the personal identification number and/or any other form of electronic identification signature issued by the Bank to the Customer and includes any replacement number, signature, or a security authentication tool.

**Transaction** means utilization of any of the Banking Services via the Service and includes any utilization that may not be authorized by the Customer or which may be fraudulent or dishonest.

**Application Form** means the application form provided by the Bank to the Customer for the purpose of applying for access to Online Banking services.

**Service** means the service of providing access to any Banking Service that is concluded, carried out or promoted through the use of internet, including through the usage of the Mobile Application.

**Customer** means any holder of an Account with the Bank, which is applied for the Services and has been issued with the Username and Password, and/or other Security Devices and includes its respective successors and representatives.

**Customer Instructions** mean the request and/or instruction received by the Bank from the Customer through the Services.

**Customer Guides** mean the welcome letter, brochures, security

Բանկի կողմից ստացված Հաճախորդի հանձնարարություն, պահանջ, ցուցում, հաղորդագրություն:

**Հաճախորդի ուղեցույց**՝ Ծառայությունից օգտվելուն վերաբերող՝ Բանկի կողմից թողարկված ցանկացած ֆորմատով (ներառյալ, սակայն չսահմանափակվելով թղթային կրիչով կամ էլեկտրոնային տարբերակով) ողջույնի նամակ, բրոշյուրներ, անվտանգության կանոններ, ձեռնարկներ և ցանկացած այլ օգնող տեղեկատվություն, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են փոփոխվել Բանկի կողմից: Հաճախորդի ուղեցույցը հանդիսանում է սույն Պայմանների անբաժանելի մասը:

guides, manuals, help text and any other documents, in any format (including but not limited to hard copies and/or electronic forms) issued by the Bank to the Customer from time to time in connection with the Services and which can be amended by the Bank from time to time. The Customer Guide shall be inseparable part of these Terms & Conditions;

**Հանձնարարական**՝ Անվտանգության Սարքերի միջոցով հաստատված՝ Ծառայության միջոցով ուղարկված և ստացված ցանկացած հանձնարարական, պահանջ, ցուցում, հաղորդագրություն:

**Instruction** means any instructions, authorizations or requests communicated through the Service and verified through the relevant Security Devices;

**Հաշիվ/ներ**՝ ցանկացած ներկա և ապագա հաշիվ/ներ, որը/որոնք Հաճախորդը ունի կամ կունենա Բանկում, բացառությամբ՝ Հաճախորդի կողմից հակառակը հատուկ նշելու դեպքերի:

**Account(s)** means any present or future account(s) which the Customer holds with the Bank except as otherwise expressly designated by the Customer;

**Պայմանագիր**՝ սույն պայմանները և Ծառայությանը վերաբերող Բանկի հաստատած բոլոր փաստաթղթերը և լրացուցիչ պայմանները, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի կողմից:

**Agreement** means these Terms & Conditions and all documents and supplementary terms issued by the Bank in connection with the provision of the Services as the same may be modified by the Bank from time to time;

**Օգտագործողի անուն**՝ Ծառայությունից օգտվելու համար Բանկի կողմից Հաճախորդին նույնականացնելու նպատակով Հաճախորդի անհատական տվյալները պարունակող տառային/թվային նիշերի չկրկնվող համադրություն՝ ներառյալ դրա հետագա փոխարինողները:

**Username** means the unique code forming the Customer's identity for login to the Service issued by the Bank to the Customer and includes any replacement logon identifiers.

**3 - Ծառայություններ և բանկային ծառայություններ**

**3-The Services and the Banking Services**

**3.1- Ծառայությունների հասանելիություն**

ա) Հաճախորդը համաձայնվում է, որ Ծառայությունը մատուցվում է, եթե նման հնարավորություն առկա է տվյալ պահին:

բ) Բանկը չի երաշխավորում Ծառայության անդադար և անխափան մատուցումը և իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել Ծառայության մատուցումը այն արդիականացնելու, բարելավելու կամ ցանկացած այլ նպատակով, որ անհրաժեշտ կհամարի: Այդպիսի դեպքերում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում առաջացած ցանկացած վնասի կամ կորուստի համար:

3.1- **Availability of the Services**

(a) The Customer acknowledges that the Service is provided on an "as it is", "as available" basis only.

(b) The Bank does not warrant that the Service will be available on an uninterrupted basis. The bank shall be entitled at any time to temporarily suspend the operations of the Service for updating, maintenance and upgrading purposes, or any other purpose whatsoever that the Bank deems fit, and in such event, liability or damage which may be incurred as a result.

3.2-**Ծառայությունների փոփոխություններ և սահմանափակումներ**

Հաճախորդը համաձայնվում և ընդունում է, որ Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ցանկացած պահի առանց ծանուցելու ավելացնել (այդ թվում՝ նոր Բանկային ծառայություններ և պրոդուկտներ), փոփոխել, զանազանեցնել, դադարեցնել և վերացնել Բանկային ծառայություններից ցանկացածը, այդ

3.2- **Alteration and Limits to the Service**

The Customer acknowledges and agrees that the Bank may, without notice, at any time and from time to time add (including adding new banking services or products), vary, alter, suspend or remove any of the services, including without limitation the right to set, vary or cancel limits for any transactions types, facilities, services and products that may be carried through the Service, and to vary their frequency and availability

թվում՝ առանց սահմանափակման սահմանել, փոփոխել կամ չկիրառել Ծառայությունների միջոցով օգտագործվող Բանկային Ծառայությունների սահմանաչափերը, փոփոխել դրանց մատուցման հաճախականությունները և հասանելիության ժամանակահատվածները:

4- **Ծառայության օգտագործում**

4.1 - **Օգտագործման ընդհանուր պայման**

Հաճախորդը համաձայնում և պարտավորվում է գործել Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ սահմանվող՝ Ծառայությանը միանալուն և դրանից օգտվելուն վերաբերող ընթացակարգերի (այդ թվում՝ Հաճախորդի ուղեցույցի) պահանջներին, սահմանափակումներին, ցուցումներին կամ հավելյալ պայմաններին համապատասխան և առաջնորդվել դրանցով:

4.2- **Անվտանգության սարքերի օգտագործում**

(ա) Հաճախորդը ընդունում և համաձայնում է, որ Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ են Օգտագործողի Անուն, Գաղտնաբառ, և Անվտանգության Սարք (Digipass կամ Google Authenticator մոբայլ հավելված)որոնք հնարավոր է ստանալ Բանկի այն մասնաճյուղից, որտեղ վարվում է Հաճախորդի Անձնական Գործը (ՀԱԳ) կամ Բանկի կողմից որոշված այլ ձևով (բացառությամբ` Google Authenticator մոբայլ հավելվածի, որը հնարավոր է ներբեռնել Հաճախորդի մոբայլ սարքի վրա: Google Authenticator մոբայլ հավելվածի գործարկման համար անհրաժեշտ QR կոդը Բանկի կողմից կտրամադրվի Հաճախորդին՝ սույն կետով սահմանված կարգով):

(բ)Հաճախորդը կարող է ժամանակ առ ժամանակ փոխել իր Օգտագործողի Անունը և / կամ Գաղտնաբառը Բանկի կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան:

(գ) Հաճախորդը համաձայնվում և գիտակցում է, որ Գաղտնաբառը պետք է տարբերվի անձը նույնականացնող ցանկացած թվերից և այլ գաղտնի ծածկագրերից, որն ինքն օգտագործում է բանկային այլ ծառայություններից օգտվելիս: Հաճախորդը որպես իր Գաղտնաբառ չի կարող օգտագործել իր ծննդյան տարեթիվը, հեռախոսահամարը, հասցեն կամ ցանկացած տառերի և թվերի այլ հեշտ գուշակվող համակցություն: Հաճախորդը պարտավորվում է կանոնավոր կերպով փոխել իր Գաղտնաբառը և չօգտագործել իր նախկին Գաղտնաբառերը:

(դ) Հաճախորդը պարտավորվում է իր Օգտագագործողի Անունը և Գաղտնաբառը գաղտնի պահել բոլորից, քանի որ դրանք նախատեսված են միայն իր օգտագործման համար:

Հաճախորդը համաձայնվում է ձեռնարկել բոլոր ողջամիտ միջոցները իր Օգտագագործողի Անվան և Գաղտնաբառի

period.

**4-Use of the Services**

4.1 - **Use of the Service in General**

The Customer agrees and undertakes to be bound by and to comply with any and all of the Bank’s procedures (including the Customer Guides), requirements, restrictions, instructions or any additional conditions pertaining to the access and use of the Service as may be issued by the Bank from time to time.

**4.2- Use of Security Devices**

(a) The Customer acknowledges and agrees that Username, Password and Security Devices (Digipass Security Token or Google Authenticator Mobile Application) are necessary for the use of the Service and may be collected by him at the branch where the Customer Identification File (CIF) is maintained or as may be otherwise arranged by the Bank (excluding Google Authenticator Mobile Application which can be downloaded to the mobile device of the Customer. QR code necessary for enabling Google Authenticator Mobile Application will be provided by the Bank in a manner set hereunder).

(b) The Customer may from time to time change the Username and Password through such methods as may be prescribed by the Bank.

(c) The Customer acknowledges and agrees that the Password he chooses will be different from any personal identification number or other secret code he uses for other banking services. The Customer must not use his birth date, his telephone number, his address or any other readily identifiable combination of letters or numbers in his Password. The Customer acknowledges and agrees to change his Password regularly and not to use any previously used Password.

(d) Customer’s Username and Password are for Customer use alone and the Customer agrees to keep them secret and not to reveal them to any person.

The Customer agrees to take all reasonable precautions to maintain the secrecy of his Username and Password, including ensuring that any

գաղտնիությունն ապահովելու համար, այդ թվում՝ ապահովելով, որ Ծառայությունից օգտվելու համար օգտագործվող իր համակարգչում, մոբայլ կամ այլ սարքում պահվող ցանկացած տեղեկատվություն պաշտպանված լինի երրորդ անձանց հասանելի լինելուց: Հաճախորդը համաձայնվում է մտապահել իր Գաղտնաբառը և որևէ տեղ այն չգրանցել: Որոշ ինտերնետային զննարկիչներ թույլ են տալիս էլեկտրոնային կերպով հիշել գաղտնաբառը՝ ապագայում այն օգտագործելով որոշակի էջ հեշտությամբ մուտք գործելու համար, և Հաճախորդը համաձայնվում է Ծառայություններից օգտվելիս չօգտագործել «հիշել գաղտնաբառը» (save password) հնարավորությունը:

information stored in a PC, mobile or another device that is utilized for accessing the Service is protected against unauthorized access by third parties. The Customer agrees to memorize his Password and not to record it anywhere. Some internet browser applications allow the user electronically store passwords for easy future access to a particular website; the Customer agrees not to use this “save password” feature in conjunction with the Service.

Հաճախորդը գիտակցում է նաև, որ ինտերնետով տվյալների փոխանցումը պարունակում է երրորդ անձանց կողմից Հաճախորդի Օգտագործողի Անվան կամ այլ տվյալների կանխամտածված աղավաղման, երրորդ անձանց կողմից Հաճախորդի համակարգչային ծրագրերի, մոբայլ հավելվածների չթույլատրված մուտքի հետևանքով Հանձնարարականների ներկայացման, դրանց բովանդակության աղավաղման, ինչպես նաև Ծառայության միջոցով ստացված տեղեկատվության աղավաղման ռիսկեր, և նա ամբողջությամբ տեղյակ է այդ ռիսկերի մասին: Բանկը չի կարող երաշխավորել վիրուսների բացակայությունը և պատասխանատվություն չի կրում, եթե վիրուսները պատճառ դառնան Հաճախորդի գույքի, ծրագրերի, ֆայլերի կորստի կամ դրանց պատճառված այլ վնասների համար:

The Customer is also aware of the fact and the risk that transmission of data through Internet may entail risks of malicious interception or distortion of the Customer’s Username or other details, submission of orders by unauthorized third parties as a consequence of unauthorized access to the Customer’s computer programs, mobile applications, of the distraction or distortion of the content of Customer’s orders/requests and other information the Customer received through the Service and fully undertakes these risks. The Bank cannot guarantee the absence of viruses and is not responsible if any viruses cause any loss of equipment, software, files or any other loss to the Customer.

(ե) Հաճախորդը համաձայնվում է, որ Բանկը մինչև Հաճախորդի հաշվի մասին տեղեկատվությունը կամ հանձնարարականները փաստացի ստանալու պահը պատասխանատու չէ դրանց անվտանգության կամ գաղտնիության համար: Եթե Հաճախորդը սկսում է ինտերնետով Ծառայության օգտագործման որևէ սեանս, ապա չպետք է հեռանա այն սարքից, որտեղից սկսել է օգտվել Ծառայությունից, մինչև որ չավարտի այդ սեանսը և դուրս չգա Ծառայության հասանելիությունն ապահովող էջից (log off): Հաճախորդը պատասխանատու է, որպեսզի Ծառայության օգտագործման համար սկսած իր յուրաքանչյուր սեանս ավարտի Ծառայության հասանելիություն ապահովող էջից դուրս գալով (log off): Հաճախորդը պարտավոր և պատասխանատու է ապահովելու և իրականացնելու զննարկման անվտանգության բոլոր միջոցները, այդ թվում՝ ինտերնետով Բանկային ծառայությունների օգտագործման սեանս անցկացնելուց հետո փակել զննարկիչը կամ Մոբայլ Հավելվածը(եթե Ծառայությունը օգտագործվում է Մոբայլ Հավելվածի միջոցով) կամ մաքրել զննարկչի պահոցը (browser’s cache):

(e) The Customer agrees that the Bank is not responsible for the security or confidentiality of his Account information or instructions until actually received by the Bank. Once the Customer has initiated an online session for the use of the Service, he will, under no circumstances, leave the Internet terminal from which he has accessed the Service until he has terminated that session and has logged-off the Service. The Customer will be responsible for ensuring that he has logged off the Service at the termination of any session. The Customer will also be solely responsible for implementing any and all browser security measures available through Customer web browser, including, closing Customer web browser or the Mobile Application (if the Service is used through the Mobile Application) or clearing Customer browser’s cache after a session of use of the Service.

(զ) Հաճախորդը պարտավորում է ապահովել՝
- Անվտանգության Սարքերի կատարյալ գաղտնիություն և անվտանգ պահպանություն,
- երրորդ անձանց կողմից Անվտանգության Սարքերի ապօրինի օգտագործման բացառումը,
- համակարգչային ծրագրերի/ծրագրային ապահովման (software) գործառնական համակարգերի, հակավիրուսային ծրագրերի, անձնական համակարգչի և/կամ մոբայլ սարքերի պաշտպանիչ այլ ծրագրերի (հակալրտեսային ծրագրերի, միջցանցային էկրանների (firewalls) և այլն) նորագույն և կատարելագործված տարբերակների առկայություն: Անվտանգության մանրամասն կանոնները սահմանվում են Հաճախորդի Ուղեցույցում:

(f) The Customer undertakes to ensure that:
- all Security Devices are kept completely confidential and secured; and
- there is no unauthorized use or abuse of the Security Devices.
- the latest and updated versions of programs/software, operating systems and antivirus applications and related data and PC and/or mobile device protection software (antispyware, firewalls and more) are installed. Details of all Security rules are envisaged in the Customer Guides.

(է) Հաճախորդի Ուղեցույցը ժամանակ առ ժամանակ թարմացվում է Բանկի կողմից, հաշվի առնելով անվտանգության արդի խնդիրները, ուստի Հախաճորդը պարտավոր է հետևել Բանկի թարմացումներին և պահպանել Հաճախորդի Ուղեցույցում նշված կանոնները:

(g) The Customer Guides shall be updated from time to time, taking into account actual needs and it is the Customer's obligation to get introduced to the Guides and abide the rules mentioned therein.

(ը) Հաճախորդը պարտավոր է Բանկին անհապաղ տեղեկացնել (Անվտանգության Ծանուցում), եթե պատճառ ունի կասկածելու, կարծելու կամ ունի տեղեկություն, որ՝
- առկա է Անվտանգության Սարքերի անվտանգության խախտման դեպք,
- Անվտանգության Սարքերը հայտնի են դարձել կամ բացահայտվել այլ անձանց, բացի Հաճախորդից,
-տեղի է ունեցել Անվտանգության Սարքերի ապօրինի օգտագործում,
- տեղի է ունեցել Երրորդ անձի կողմից Ծառայության օգտագործում:
Մինչև Հաճախորդի Անվտանգության Ծանուցման փաստացի ստացումը Բանկի կողմից, Հաճախորդը պատասխանատվություն է կրում Ավտանգության Սարքերի ապօրինի գործածմամբ կատարված բոլոր գործարքների համար:

(h) The Customer undertakes to notify and/or contact the Bank immediately ("Security Notification") if he has a reason to believe, suspects or has a knowledge that:
- the security of any Security Device may have been compromised,
- such Security Device has become known or been revealed to any person other than the Customer,
- there has been unauthorized use of any Security Device,
- there has been use of the Service by any person other than the Customer.
Until the Customer gives such notice to the Bank and the Bank actually receives it, the Customer will be liable for all Transactions that may occur as a result of authorized or unauthorized use of Customer's Security Devices.

(թ)Հաճախորդն ընդունում է, որ Բանկը կարող է ցանկացած ժամանակ ապաակտիվացնել Անվտանգության Սարքերից մեկի կամ բոլորի գործածումը կամ դրանք ետ վերցնել՝ առանց այդ մասին պատճառ նշելու և նախապես ծանուցելու:

(i) The Customer acknowledges that the Bank shall be entitled to deactivate or revoke the use of any one or more Security Devices at any time without assigning any reason and without prior notice to the Customer.

(ժ) Հաճախորդը սույնով համաձայնվում է, որ Բանկը պատասխանատու չէ պայմանագրային կամ ոչ պայմանագրային որևէ ուղղակի կամ անուղղակի, առկա կամ ապագա վնասների, ծախսերի համար, որոնք արդյունք են՝
- այն գործարքների, որոնք իրականացվել են Հաճախորդի կողմից կամ ենթադրաբար Հաճախորդի կողմից՝ վերջինիս համաձայնությամբ կամ առանց դրա, անվտանգությունը

(j) The Customer hereby agrees that the Bank shall not be liable in contract, tort or otherwise, for any damages, losses, expenses or costs whatsoever whether direct, indirect, foreseeable or not suffered or incurred by the Customer as a result of:
- any transaction resulting from any Instruction made by the Customer or purportedly made by the Customer with or without his consent and referable to such Compromised Security Device and which was

խախտված Անվտանգության Սարքի/երի օգտագործման միջոցով տրված Հանձնարարականների, որոնց կատարումը Բանկը սկսել էր մինչ այդ սարքի/երի անվտանգությունը խախտվելը կամ խախտվելու պահին և որոնց կատարումը Բանկը դադարեցրել է ,
- Բանկի կողմից Հաճախորդի՝ անվտանգությունը խախտված Անվտանգության Սարքի/երի օգտագործման միջոցով տրված ցանկացած Հանձնարարականի չկատարման, որը ենթակա էր կատարման այն պահին, երբ Բանկը դադարեցրել է դրա կատարումը:

processed by the Bank prior to or at the time of such Compromised Security Device and which the Bank has stopped the processing thereof; or
- any failure by the Bank to carry out any Instruction referable to a Compromised Security Device which was outstanding as at the time the Bank has stopped the processing thereof.

(ի) Հաշվի առնելով, որ Բանկը կարող է ցանկացած պահին ստուգել վճարման հանձարարականների վավերությունը/իսկությունը, Հաճախորդը պարտավոր է իր կոնտակտային տվյալների՝ այդ թվում նաև հեռախոսահամարների փոփոխության մասին անհապաղ տեղեկացնել Բանկին՝ Հաճախորդի հետ կապ հաստատելու հնարավորություն ընձեռելու նպատակով:

(k) The Bank should be able to reach the Customer any time to check the validity/authenticity of payment instructions sent by the Customer to the Bank through the Service. Hence, the Customer shall immediately inform the Bank about any changes in Customer's contact details, including the mobile/phone numbers.

**5 - Հաճախորդի հանձնարարականներ**

5.1- Հաճախորդն ընդունում և համաձայնվում է, որ իր կողմից տրված բոլոր հանձնարարականները (լինեն դրանք իրականում տրված իր կողմից, թե՝ ոչ) վերջնական և պարտադիր են, և Բանկն իրավունք ունի դրանք կատարել ու ընթացք տալ, առանց Հաճախորդին լրացուցիչ ծանուցելու:
5.2-Հաճախորդն ընդունում և համաձայնվում է, որ Ծառայության միջոցով տրված ցանկացած հանձարարական (լինի այն իրականում իր կողմից տրված, թե ոչ) Բանկը կարող է ընդունել և կատարել որպես իսկական և պատշաճ ձևով վավերացված հանձարարական՝ չունենալով որևէ պարտավորություն ստուգելու դրա իսկությունը կամ այն տված անձանց լիազորությունները:
5.3- Հաճախորդը պահանջում և լիազորում է Ծառայության միջոցով տրված իր հանձնարարականները հիմք ընդունել և կատարել ինչպես իր կողմից ստորագրված գրավոր ձևով տրված հանձնարարականներ, նույնիսկ եթե դրանք հակասում են իր Հաշիվներին վերաբերող նախկինում տված պարտադիր ցուցումներին: Հաճախորդը լիազորում է Բանկին ելքագրել իր Հաշիվներից բոլոր այն գումարները, որոնք Բանկը վճարել է Ծառայության միջոցով Հաշիվների վերաբերյալ ստացված հանձնարարականները կատարելու հետևանքով:
5.4-Անկախ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներից՝
Հաճախորդը ընդունում և համաձայնվում է, որ Բանկը ցանկացած ժամանակ կարող է՝
- ձեռնպահ մնալ Հաճախորդի կամ ենթադրաբար Հաճախորդի կողմից տրված հանձնարարականները արագ կատարելուց՝ դրանց իսկությունը ստուգելու նպատակով, առանց պատասխանատվություն կրելու Հանձնարարականը չկատարելու կամ կատարելուց ձեռնպահ մնալու հետևանքով

**5-Customer Instructions**

5.1- The Customer acknowledges and agrees that all Instructions (whether authorized by the Customer or not) are irrevocable and binding on him and the Bank shall be entitled to effect, perform, or process such instructions without any further reference or notice to him.
